«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն
Երեւան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

---

07.07.2023թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Արամ Խաչատրյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80, e-mail: grisha.balasanyan@hetq.am

Հարգելի պարոն *Խաչատրյան,*

«Հետք» էլեկտրոնային թերթը դեռևս 03.07.2023թ. գրավոր հարցում էր ուղարկել մարզպետարան: Պատասխանը ստացվել է 07.07.2023թ., որը թերի է: Անդրադարձ չի կատարվել բոլոր հարցերին, չի տրամադրվել պահանջված ամբողջ տեղեկատվությունը, որով խախտվում է «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական Կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվություն ստանալու, տարածելու իրավունքը:

Մասնավորապե.

1. 2020-2023թթ. մարզում որքա՞ն է կազմել կարկուտի հետեւանքով գյուղատնտեսությանը պատճառված վնասի չափը: Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների, համայնքների եւ գյուղերի՝ նշելով գումարի չափը:

Այս հարցին մարզպետարանն ընդհանրապես անդրադարձ չի կատարել, տեղեկատվություն չի տրամադրել:

Մարզպետի գրությանը կից նշված է, որ ուղարկել է նաև տեղացած կարկտահարության վերաբերյալ տեղեկատվություն և որպես առդիր նշված է 2 ֆայլ, մինչդեռ այդ տեղեկատվությունը բացակայում է: Կցված երկու ֆայլերը վերաբերում են մեկ այլ տեղեկատվությանը՝ 2 օրինակից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղեկատվություն չտրամադրելով մարզպետարանը խախտել է լրագրողական գործունեություն իրականացնող կազմակերպության իրավունքները, խնդրում ենք սեղմ ժամկետում վերացնել խախտումները և տրամադրել ամբողջական տեղեկատվություն:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ *Գ. Բալասանյան*